

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առենձելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

b  
289


100 դպ



1373-51

VII, 28-3

VII, 28-5



Գ. Յակովլիքը իր աշխատանոցում

Главлит. 58350


Тираж. 1000

3-я Типография Госиздата С. С. Р. Армении.  
Москва, Армянский пер. 2.

5  
289

# ՅԱԿՈՒԼՈՎ

(ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ)



1925

Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏՂՐԱՏ № 317 ՄՈՍԿՎԱ

Իմ մանկությունն անցել ե Թիֆլիսում—իմ ծննդավայրում։ Հայրս փաստաբան երև և խոշոր անուն ուներ, բայց վոչնչ չթողեց ընտանիքին, բացի բարեկամներից և անունից։ Նրա անունը, վորպես ազնիվ և տաղանդավոր մարդու անուն, մեր ընտանիքի միակ նեցուկը յեղավ՝ աղքատության ծանր պայմաններում, վորոնց մեջ և հորս բարեկամների ոգնությամբ մայրս դաստիարակեց իր զավակներին։

Մեծացած-դաստիարակված այն հերոսական ժամանակաշրջանում, յերբ պայքար եր տարվում լեռնականների հետ եպիքական կովկասի հյուսիսում, այն կովկասի, վոր յերզել և կերմոնտովը, իմ մայրը կարողանում եր տանել բախտի փոխությունները և աղքատության պայմաններում աշխատում եր յերեխաների մեջ պատվաստել զեղեցկի զգացում։ ամենոր պարապում եր մեզ հետ յերգեցողությամբ, նկարչությամբ և ընթերցանությամբ։

Իմ տասը տարեկան հասակում, 1893 թվին, մայրս իր ընտանիքը փոխաղբեց Մոսկվա, ուր յես ընդունվեցի Լազարյան ճեմարան։ Ընդունվելով գիշերոթիկ, յես անցա վեց դաստարան, վորից հետո ինձ հարկադրեցին հեռանալ (լրիվ դասընթացը չկերջացրած) զիմնադիական կյանքի պայմաններին յենթարկվել չկարողանալուս համար։ Մանկությունից բուռն սերունենալով դեպի նկարչությունը, վոր զարգացրել եր իմ մեջ մեծ յեղբայրս, վորը նույնպես սիրում եր նկարչությամբ զրադիւ և տանում եր ինձ ցուցահանդեսներ ու թատրոններ, յես վճռեցի մտնել նկարչության և քանդակագործության դպրոցը։



1373-51

Վորովհետև այն ժամանակ ընդունելության համար մըրցություն գոյություն ուներ, ուստի յես պետք ե պատրաստվելի քննության և մտա նկարիչ Յունի դպրոցը, վորի շնորհիվ և քննություն բռնեցի յերկու ամիս պատրաստվելուց հետո (1900 թվին):

Այս ժամանակից սկսվում ե իմ պրոֆեսիոնալ դաստիարակությունը կամ, ավելի ճիշտ, ինքնակլիթությունը, վորովհետև դպրոցական աշխատանքները յես չելի կատարում, այլ աշխատում ելի միայն տանը, ինձ համար, վորի հետևանքով յերկու տարի անցնելուց հետո դուրս արվեցի դպրոցից՝ հաշվետու աշխատանքներ չներկայացնելու պատճառով:

Սեր ունենալով իմպրովիզացիայի՝ յես ժխտում ելի ամեն տեսակ ուսուցում և ուրիշի աշխարհայացքը զգիս առնել: Մանկությանս որերին յերաժշտությամբ և պոեզիայով կրթված, յես ձգտում ելի համար այն բանին, վոր նկարչության մեջ կարողանամ արտահայտել, ամենից առաջ, իմ եմոցիաները:

Հիմա յես կարծում եմ, վոր իմ մեջ խոսում եր իմ ասիական ատավիզմը, վորին անմատչելի յե յելորպական ռեալիզմը, բայց մոտ ե սիմվոլիզմը, վոր լայն ասպարեզ ե տալիս դեկորատիվ ֆանտաստիկային:

Մի ժամանակ մանկությանս որերին ամառային ամիսները անցրի Վրաստանի լեռներում. այդտեղ վճռեցի իմ իմպրովիզացիաների համար մոտիվներ գտնել կովկասյան լեռների բնության մեջ և վոչ թե ինձ ոտար հյուսիսի տափաստանային բնության: Այդ նպատակով յես գնացի Թիֆլիսի մոտ գտնվող սարերը, բայց վորպեսզի արդարացնեմ գնալու նըպատակահարմարությունը, յես, վորպես զինապարտ, զինվորական ծառայությունս կրելու համար մտա կովկասյան գնդերից մեկը, միացնելով, այսպիսով, նկարչի աշխատանքը զինվորի ծառայության հետ (1902—1903):

Այդ ժամանակները յես ծանոթ ելի «դեկադենտ» համար վող սիմվոլիստների և իմպրեսիոնիստների գործերին. դրանց

մեջ ել նեցուկ գտա իմ անհատական ճանապարհի համար, վոր սակայն համակրությամբ չընդունվեց հասարակության կողմից:

Դա ոռւս յապոնական պատերազմի առաջին տարին եր: 1903 թվի աշնանը վերադառնալով Մոսկվա, յես ինձ հետքերի մոտ յերեք հարյուր ամեն տեսակի նկարներ և ուրվանկարներ, վոր արել ելի իմ լեռներում յեղած միջոցին: Դեկտեմբերին յես, վորպես պահեստի սպա, նորից կանչվեցի ծառայության և ուղարկվեցի կովկաս, ուր մնացի մոտ յերեք ամիս և ապա ուղարկվեցի Հեռավոր Արևելք, Խարբենից հարավ, ուր և ժամանակս անցրի պատերազմի մեջ մինչև 1904 թիվը, վորից հետո վերադարձա Մոսկվա՝ հոկտեմբերյան հեղափոխությունը ճնշվելուց անմիջապես հետո:

Այսպիսով թափառելով դիտելով և ուսումնասիրելով լույսի եփփեկտները կովկասի զանազան վայրերում, ապա ընկնելով Մանջուրիայի ավազաբլուրները (սովկանները), այլ կազմություն ունեցող բնության և կուլտուրայի մի շրջան, յես զբաղվեցի այն հարցով, թե ինչ զլխավոր գործն ե դրված այդ կուլտուրայի հիմքում: Յերկնքի կապույտը հուլիսի տաք ժամանակը՝ Մանջուրական տրոպիկական անձրևների շրջանում, չինացիների արվեստի գրաֆիկությունը և գծայնությունը, մի շրջկենցաղական գծեր և ճաշակներ, չինացիների սերը գեղի փրառող առարկաները, պեյզաժի առանձնահատկությունը իմ մեջ առաջացրին այն միտքը, թե հենց լույսի բնույթն ե վոճի վորոնածս հիմքը:

Մի անգամ դաշտային պլիզմատիկ հեռադիտակով նայելիս, յես նկատեցի կապույտ սպեկտրալ շերտ, վորը ծիածանի պես սքողում եր լեռների, ծառերի և շենքերի ստվերագծերը: Յես այնուհետև շատ անգամ ստուգեցի այդ եփփեկտը, և հետեանքը յեղավ նույնը: Այդ ժամանակ իմ մեջ ծագեց այն միտքը, թե կուլտուրաների տարբերությունը կայանում ե լույսերի տարբերության մեջ: Յես սկսեցի կառուցել գծերի և լույսերի շարժման և տարբեր ժողովուրդների հիմնական

տրամադրությունների առանձնահատկությունների հարաբերության թեորիան. կառուցեցի ինձ համար վոճերի ծագման այն թեորիան, վորով և առաջնորդվում եմ իմ արվիստի մեջ մինչև այսոր:

Սկսելով վերացական կոլորիստական կոմպոզիցիայից (վորը ընդունվեց իմպրեսսիոնիստներից, վորոնք զրավում եյին սիմֆոնիաներով) յես անցա չինական գծային արվեստի պլաստիկության: Իմ առաջին աշխատանքը, վոր ինձ արժանացրեց ուշադրության, «Сказки»-ներ (գնել ե Տրետյակովի Գալերեիան 1919 թվին), վոր ցուցադրվեց «Московское Товарищество». ի պատկերահանդեսում 1906 թվին:

Գնալով Մանջուրիա մի այնպիսի ժամանակ, յերբ թայփունը փչում եր ամիսներով, յես տարվեցի այն պտտվող շարժումով, վոր առաջացնում ե այդ քամին:

Մոսկայում ներկա լինելով ձիարշավին, յես նկատեցի ազարտից ալեկոծվող ամբոխի շարժումը, վոր ինձ հիշեցրեց մանջուրական թայփունը: Այս տպավորությունը միացնելով կանաչ արշավադաշտի ապակյա պարզության, ձիերի վազքի տպավորության հետ,—յես կառուցեցի ձիարշավի կոմպոզիցիան—ձիարշավը մըրկային շարժման մեջ—չինական գծանը՝ կարչությամբ և Չինաստանի խոնավ սպեկտրի ակվարելային ժամանցիկությամբ:

Հետագայում, ապրելով Սև ծովի Կովկասյան տփերին, յես շարունակեցի ուսումնասիրել տարերքի—ծովի, արշալույսի, կրակի—շարժումն ու սպեկտրները, թուշունների և գաղանների շարժումն ու գունափոխությունը, հենց իրենց իրերի և յերևույթների մեջ վորոնելով պլաստիկայի և վոճի հիմունքները: Կարդալով անտիք կրոնների պատմությունը, յես ուզում եյի թափանցել նրանց վոճը, այսինքն Արևելքի առանձին ժողովուրդների մտածելու յեղանակը, վորպեսդի վերականգնեմ նրանց մտածողության կապը իրենց յերևակայության ստեղծած պլաստիկ պատկերների և սիմվոլների հետ, վոր-

ձելով աշխարհը բացատրել նրանց խառնվածքի պրիզմայի միջոցով:

Բազմագույն արևերի գաղափարը ծնունդ ե առել քաղաքի փողոցի եւեքտրական լույսից և բազմաթիվ լապտերներից:

Իմ հետեւյալ յելույթը կրում եր ծրագրային բնույթ («Վեհու» պատկերահանդեսը 1907 թ.) մի շարք դեկորատիվ և զրաֆիկ աշխատանքներով, վոր նվիրված եյին կոլորիտի, զըծային շարժման, նյութի և քաղաքի մասսայական տեսարանների պրոբլեմներին: Այս յելույթը առիթ յեղավ, վոր նկարիչ Սերովը և «Վեհու» ժուրնալը ընդունեն ինձ: Այս շրջանը կարելի յե համարել գեկորատիվ-սիմվոլիքական, ամիական-արևելյան: Յես իրերն ընդունում եյի, վորպես գույնի և գրաֆիկական սիմվոլներ, վորպես նրանց առարկայական բնավորության տեսքը («Ամբոխի մարդը», «Աքաղաղներ», «Սուխումը ձյունի տակ», «Եւմբիտաժ այգին», «Արաբական սիմֆոնիա», «Կանացի պորտրետ» և ուրիշները):

Հետեւյալ շրջանը կարելի ե համարել անկյունաղարձ հարթ և գծային արևելյան արվեստից դեպի արևմտյան (իտալական) յեռաչափ ձեր և բանաստեղծական ձեր մշակումը՝ նկարչության մեջ: Այդ շրջանին են վերաբերում այս աշխատանքները—Պուշկինի «Ճիլ նա սվետ թագար եծնայի» (վիտրաժ) և Լեռմոնտովի «Դուша մօյ մրաճն» (վիտրաժ): Այդ շրջանին ե վերաբերում նաև իմ առաջին գեկորատիվ աշխատանքը (Կովկասյան պանդոկ—«Գուխան») մի մեծ յերեկույթում: Այստեղ առաջին անգամ յես գեկորացմանը տալիս եմ ձարտարապետական ձեւ փոխանակ պանորմային նկարչության: Այդ որվանից յես դարձա բարեգործական յերեկույթների պրոֆեսիոնալ գեկորատոր, յերկու տարվա (1908/9 թ. թ.) ընթացքում սարքելով մոտ տաս յերեկույթ: 1910 թվին յես մեկնեցի իտալիա: յերեք ամիս ապրեցի Ֆլորենցիայում, նույնքան և Հռոմում և քիչումիչ մացյալ քաղաքներում—Սիենում, Վենետիկում, Պապուայում: Ուսումնասիրելով թանգարաններն

ու քաղաքները՝ յես ստուգում եյի լույսի, վոճի բնույթի վրա ունեցած ազդեցության իմ յեղակացությունը, վոր արել եյի Արևելքում։ Մի շարք աշխատանքներով վերադառնալով Մոսկվա, յես հանդես յեկա «Մир Իսկուստվա» պատկերահանդեսում (1908). վոչ մի նկարիչ ինձ չընդունեց, համարելով, վոր յես հրաժարվելով իմ արեւելյան գծից, սիմալ եմ գործել և արել եմ վոչ իմ գործը։ Այդ ժամանակները մողա եր դառնում Մատիսի յապոնականացրած նկարչությունը և ծնունդ անել եր սկսում առարկայական նկարչությունն ու կուրիզմը։ Զթողնելով գծայնության, կոլորիտի և նյութի հիմնական սկզբունքը, յես շարունակեցի իմ արվեստը փոխադրել յեվրոպական յեռաչափային ուղին. հետեւյալ 1912 թվին հանդես յեկա «Մир Իսկուստվա» պատկերահանդեսում՝ մոնումենտալ արվեստի մի շարք աշխատանքներով («Լոմբարդիա», «Կոփ», «Չիարջավ», «Դեկորատիվ պաննո», «Կինը սեղանի առջե»)։

Վոլորապտույտ կամ պարույրածեն կառուցումը, վոր իր առաջին արտահայտությունը գտավ 1905 թ. «Չիարջավում» (հարթածե), «Կոփ» պատկերում ստանում ե յերրողական նկարչության ոիթմիկ, հեռանկարային (յեռաչափ) արտահայտությունը։ Այդ հերոսական պատկերի վրա կատարածս աշխատանքը ինձ հնարավորություն տվեց ոգտագործել նրա կոնստրուկցիան Հեղափոխության շրջանի մի շարք գեկորատիվ աշխատանքների մեջ, վորոնց շարքում զիսավորներն են՝ «26 կոմունարների մոնումենտը» և «Ծիկենցին»։

Այս շրջանը զուգագիպեց ֆուտուրիզմի առաջին գեկորացիաներին, առաջին աղմկալից վիճաբանություններին և Պիկասոի հաջողության, վոր յեկավ Մատիսին փոխարինելու (1912—1913 թ.)։

Նկարիչների ձախ շրջանում յես համարվում եյի «պատեստ»։

Յես գնացի Պարիզ, վորպեսզի հերոսական թեմաներից («Աղքատ ասպետ», «Կոփ», «Լոմբարդիա») իմ արվեստով

դառնամ գեպի ժամանակակից ուրբանիստական թեմաները («Չիարջավ», «Ամբոխի մարդը», «Երսցենտրիկներ» և ուրիշ)։

Պարիզում յես ներկայացվեցի Ռուբերտ Դելոնեյին, վորը զբաղվում եր լույսի և գույնի ոիթմիկ ու տեմպային շարժման առեղծվածի լուծումով, վոր ինքը կոչում եր «սիմիլտանիզմ» խոսքով։ Ռուբերտ Դելոնեն հանդիսանում ե ուղղակի ժառանգորդը Փրանսական կուլտուրայի կոլորիստական ճյուղի։ Դելակրուայից, առաջին իմպրեսիստներից սկսած մինչև Սինյակ, Փրանսական նկարչական կուլտուրայի այն ճյուղի, վորն իր սկիզբն ե առնում վենետիկյան դպրոցից։

Մենք ամառն անցրինք աշխատանքների և զրոյցների մեջ. յես ծանոթացրի նրան իմ արեւի թեորիային և պատկերեցի մի քանի դրություններ, վոր հարազատ եյին նրան, վորպես կոլորիտի։

Թեորետիկ կարգի աշխատանքները թույլ չտվին ինձ ըգաղվել ուրբանիստական նկարչությամբ, վորին կամենում եյի նվիրել իմ աշխատանքը. յես կարողացա այդ վոճով կատանվիրել իմ աշխատանքը. «Մոնտե-Կարլո» և «Եար Օլիմպիա»։ Ռուսաստան վերադառնալիս, Բերլինում յես հանդես յեկա «Առաջին աշնանային սալոն» պատկերահանդեսում (կազմակերպել եր «Շտուրմ» ժուրնալը)։ Վերադարձիս յես նկարեցի մի շարք կոլորիստական բնույթի նկարներ և մասնակցեցի «Միր Իսկուստվա» ցուցահանդեսին։ Դա պատերազմից մի տարի առաջ եր։ 1917 թ. պատերազմի պատճառած փոքրիկ ընդհատումից հետո, յես պատվեր ստացա գեկորանկարել կուզնեցկի Մոստի վրա զտնվող մի կաֆե, վորը վարձակալել եր Ֆիլիպպովը։ Աշխատանքը վերցրել եյի կոնկուրսով։

Մտնելով այդ շենքը, յես նկատեցի, վոր դա զտնվում ե յերկու տների միջև յեղած տարածության վրա, և այդ տների լուսամուտները նայում են նրան, իսկ կիսաշրջան ապակյա առաստաղը, ինչպես ջերմոցը, շինված եր աղեղաձեվ յերեալաթներով։ Իմ անցյալում գեկորացման վորձ ունենալով՝ յես

ուշադրություն դարձրի ապակիների քառակուսի վանդակներին, վորոնց կարելի յեր փոխել, միմիայն նրանց հյուսելով-միացնելով ընդհանուր կոմպոզիցիայի մեջ։ Դրա համար անհրաժեշտ եր վանդակների և բարակ ձողերի սկզբունքը մտցնել դեկորացիայի մեջ։

Այս կարգի ճարտարապետությունը լավ հայտնի եր չինական որինակներից, և յես դիմեցի այդ ձեին։ Վորովհետե անհնար եր պատվիրել արմատուրան և յեղածը գուեհիկ եր, յես վճռեցի շինել այն վերացական ձևերով և կառուցել պտավող մասերի վրա։ Այս աշխատանքում ինձ ոգնեց նկարիչ Գոլոշանովը, միակ մարդը, վոր զգում եր նկարչական թեման ճարտարապետական ձևով տալը։ Նկարչական մասում ոգնեցին մի շարք նկարիչներ. նկարիչ Ռիբնիկովին ե պատկանում եստրադայի գլխի պանոն։

Այսպիսով ծնունդ առավ այն ձեզ, վոր հետագայում ստացակ «կոնսորտուկտիվ» անունը։

«Պիտտորեսկը» սկսվեց 1917 թվի հուլիսյան որերին և բացվեց 1918 թ. հունվարին։ Նրա թեման քաղաքն եր։

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարեդարձին թատրոնների կոմիսար Ռ. Դ. Կամենեան մի շարք ներկայացումներ ստեղծեց կամերնի, կամիսարժեսկայաի անվան և այլ թատրոնների հետ միասին։

Անձնապես ինձ ե պատկանում Շնիցերի «Կանաչ Թութակ»-ի բեմադրությունը, վոր խաղացվեց Հոկտեմբերի առաջին տարեդարձին։ Ինձ ոգնեցին Գոլոշանովը, Բալիկը. հանգերձները պատրաստեցին կամարդենկով և Գալատնիեր։

Թատրոնական իմ առաջին աշխատանքը յեղավ կլողելի «Խաբեռություն» բեմադրությունը Մոսկվայի կամերնի թատրոնում 1918 թվին։

Հետեւալ աշխատանքներս յեղան պրոֆեսուրան 1918/19 թ.թ.—«Եղիպատրիկ» մակետը ըստ Ռ. Դ. Կամենեայի կազմած կոնկուրսի առաջադրած ինքը։

1919 թ.՝ „Զափ առ չափ“, դերասան Մ. Ֆ. Լենինի և ոեժիսյոր ի. Ն. Խոդուլեկի հետ, 1920 թ.—«Պրինցուհի Բրամբիլիա», 1921 թ.—«Միստերիա Բուֆ» մակետը, ոեժիսյոր վա. Մեյերհոլդ և 22 թ. «Կոլլա գե-Ռիենցի» մակետը—վա. Մեյերհոլդ և Վալերի Բերուտով, 1923 թ., «Սիւյոր Ֆորմիկա» —կամերնի թատրոնում և «Ժիրոֆլե Ժիրոֆլյա»։ Ապա բեմադրվեց «Ռիենցին» (Զիմինի ոպերայում), «Հրեյական Այրին» նախկին կորշի թատրոնում, «Թափառական հրեան» (Գարիմաթատրոնում) և 1924 թ.՝ «Գեղեցիկ Հեղինեն» Ակադ. Մեծ թատրոնում։ 1924 թ.՝ «26-ի մոնումենտը»։

Այս բոլոր աշխատանքների վրա յես ստուգեցի այն սկզբունքները, վորոնք դնում եյի նկարչության հիմքում։

Գեորգի Յակովլյով

ՆԿԱՐԻՉԸ ՅԵՎ ՄՈՆՈՒՄԵՆՏԸ

**26-ի մոնումենտը**—դա մտածելու նյութ և մոնումենտի մասին ընդհանրապես:

**Մոնումենտ:** Յեթե մենք դիտենք այն բազմաթիվ արձանները, վոր կանգնած են Մոսկվայի բուլվարներում ու հրապարակներում, մենք պարզորեն կղգանք կնիքը այն կուտուրայի, վոր խորթ ե հեղափոխության դարաշրջանին: Յեկ իսկապես: Հուշարձանի պրոբլեմը—դա վոճի պրոբլեմ ե, վոճի պրոբլեմը—դա կենցաղի պրոբլեմ ե, կենցաղի պրոբլեմը—արվեստի պրոբլեմ ե, վորովհետև կենցաղն ե վորոշում արվեստը:

Բուրժուական դարաշրջանը—դա սուբեկտիվիզմի և ինդիվիդուալիզմի դարաշրջան ե: Բուրժուական արվեստի ծննդավայրը՝ առանձնասենյակն ե, բնակարանը: Դրան, բուրժուայի այդ բնակարանին ե հարմարվել արվեստը: Պորտրետները նկարվել են առանձնասենյակի համար, նատյուր-մորտները՝ սեղանատան, պեյզաժները՝ հյուրասենյակի կամ ընդունարանի և «նյու»-երը՝ ննջարանի:

Բուրժուական գեղարվեստական կուտուրայի ամբողջույժն ու կարողությունը նկատի ուներ մի սպառող: Հրապարակը դատարկ եր, կեղտոտ և խեղճ եյին բանվորական թաղերը: Արվեստը թագնված եր բուրժուայի զարդարուն դռների յետև: Բանվորը տոնածառ դիտող յերեխայի պես սառնապակիների միջով եր նայում այդ առանձնյակների շքեղության:

Հեղափոխությունը, տանտիրող փոխարեն, խոտացրեց այդ

առանձնյակները և արվեստը դուրս հանեց հրապարակը: Հրապարակը, վոր բուրժուական ժամանակներում հոմանիշ ե այլակերպության, դարձավ հեղափոխական ժամանակի արվեստի կերպարանքը:

Հեղափոխությունը քշեց արվեստի դռնապահներին, այդ՝ արվեստը «ժողովրդի աչքից» հոգածու պահպանողներին: Արվեստը դարձավ մոնումենտալ: Գրում եմ մնումնենտալ—և հիշեցնում եմ տարբերությունը հուշարձանի յեկ մնումնենտի:

Արձանը գերեզմանատուն ե:

Հուշարձանը—անցյալի վավերացումն ե:

Մոնումենտը—դա ապագայի վավերացումն ե:

Մոնումենտը—կոչ ե:

Հեղափոխության արվեստը անձնավորության պաշտամունք չե, այլ պայքարի պաշտամունք և կազմակերպված մասնաների վավերացում:

Ուստի վոչ թե 26, այլ միլիոնների գործ:

Վորովհետև 26-ը հեղափոխության մեջ—դա միլիոնների գործակիցն ե:

Միթե մեզ անհրաժեշտ են թերեալիկ, մտքի մարտիկ Շահումյանի լուսանկարչական ճշգրիտ «տվյալները»: Զե՞ վոր մտքի մարտիկ ածականը վեր ե գոյական Շահումյանից: Զափարիձեն—ագիտատոր ե. Ֆիոլետովը՝ բանվոր, Պետրովը՝ ռազմիկ: Սա «հեղափոխության գործիչների ալբոմ» չե: Սրանք՝ հեղափոխության կերպարանքներ են: Սրանք կերպարանքներ են, վոր բռնեցին նրանց լուսանկարի տեղը:

Աշխատելով 26-ի մոնումենտի վրա, յես մտածում եյի Արևելուարի և Արևելքի արվեստները համաշխարհային հեղափոխության պլատֆորմայի վրա զոդելու մասին:

Ուստի՝ կորչի՝ քաղքենիական մտքի հեռանկարը: 26-ը—դա սիմվոլ ե, 26-ը—քարոզ ե: Քարոզ, բայց վոչ տերտերական կրօնական հասկացողությամբ, այլ մասսաների գործոն գիտակցության մեջ:

Այո՛, մենք պնդում ենք: Մոնումենտ՝ զարդարանք չի, այլ  
մեծ հրապարակ:

Այո՛, մոնումենտը արվեստի տաճար չի, այլ կյանքի ար-  
հետանոց ե:

Մոնումենտ՝ հաշվեգիրք չի: Մոնումենտ՝ կուլտուրայի  
ոջախ ե: Թանգարան: Եստետիքական զարդերի անհամ հավա-  
քածու չի, այլ հեղափոխության կուլտուրական նվաճումների  
համախմբում:

Բագու: Յեկրոպան Բագուն ճանաչում ե նրա նավթով:  
Բագվի սև արյունը ծանոթ ե անզլիական բուրժուային, Բագվի  
կարմիր արյունը տեսավ գնդակահարության հիշելի որը: Կար-  
միր արյունը նա մոռացավ: Ուզում ե ձեռք գցել սև արյունը:

Յեկ նա չգիտե, վոր Բագուն, վորպես կուլտուրական կեն-  
տրոն—Արևելքի անծանոթ արվեստի գանձարանն ե: Խորհրդա-  
յին իշխանությունը Արևելքի փակ արկղի բանալիները հանձ-  
նել ե Արևելքի ժողովուրդներին: Բանալիներ, այլ վոչ թե ան-  
գլիական շինծու բանալիներ: Յեկ մոնումենտը ստեղծելով՝  
մենք կամեցանք ստեղծել այն արամակիլինը, վոր Արևելքի  
արվեստը կդնի իր նվաճած տեղը:

Այժմ ձեի մասին: Միայն այն ձեի, վոր ընդունեցինք  
մենք մոնումենտը ստեղծելիս: Ուստիլիտարիզմը վոչինչ չստեղ-  
ծեց ինքնագովությունից բացի: Նա անցավ առևտրական կոմ-  
բինացիաների տնտեսավարության: Մենք վավերացնում ենք  
արվեստը վորպես դասակարգային մտքի հաղթանակ: Սա—մեր  
ուսմանտիզմն ե:

Ումանտիզմ—առանց միստիկ վերացականության:

Միաք պլյուս կենցաղ—հեղափոխության գիտակցու-  
թյունն ե:

Ահա մավզոլեյի արխիտեկտոնիկ սխեման:

Մոնումենտի արխիտեկտուրի ձեր միտքը մի կողմ ե վա-  
նում: Այդ ձեր համաշափ ե: Զգալապես: Վորովինետե—համա-  
չափությունը հավասարակշռություն ե, իսկ հավասարակշռու-  
թյունը—նշան ե անշարժության:

Մոնումենտի հիմքը՝ սպիրալն ե:

Սպիրալը—խախտված հավասարակշռության ֆորմուլ ե,  
հանուն ձգտումի: Սպիրալը յելք ե դեպի վեր և վայրեջք ե  
դեպի հողը: Դա գոթական տարածումը չե դեպի յերկինք: Դա  
յերկի համար հերոսություն գործելու ձգտում ե:

Աստիճանավորումը—դա հեղափոխության եվոլյուցիոն մո-  
մենտն ե:

Այսպես ենք հասկանում մենք (իհարկե վոչ միստիքորեն)  
հեղափոխության սիմվոլիզմը արվեստի համար:

Կենցաղ: Ավելի շուտ կեցություն, քան կենցաղ: Հեղա-  
փոխության կենցաղը—լուսանկարչական դեպքեր չեն: Ուս-  
տի 26-ի արձանային պատկերացումը — դա պորտրետներ  
չեն, այլ կերպարանքներ: Ամենորյա կենցաղը — լուցկի յե,  
վոր չի լուսավորում ելեքտրական ուժեղ լամպի ներկայու-  
թյամբ: Խանդակառ մարդու ձեռքը բարձրանում ե վեր,  
մտածողի ձեռքը ծանրանում ե զբազով — վոչ թե կենցաղ,  
այլ կեցություն, վոչ թե գործողություն, այլ արարողություն:

Վորովինետե մոնումենտը նույնն ե, ինչ վոր մասսայական  
թատրոնը: Մոնումենտը—դա հեղափոխության կոլիզեյն ե և,  
իհարկե, վոչ գերեզմանաքարը:

Վերև ասվածը վորոշում ե յեղրակացությունը:

Մենք խոսում ենք վոճի մասին:

Յերբ յես՝ Յակուլովս, 26-ի վողբերդական մահվան հինգ-  
երորդ տարեդարձին տեսա Ազատության հրապարակը, յես հի-  
շեցի իտալական վարպետների վորմանկարները, վոր պատկե-  
րացնում են ժողովրդական մեծ դեպքեր: Ազատության հրա-  
պարակը ուներ այն գծերը, վոր յես կանվանեյի հեղափոխու-  
թյան վոճ:

Հեղափոխության վոճ: Մոնումենտալ վոճ: Ահա մեր խըն-  
դիրները:

Մոնումենտն իմ, վորպես նկարչի մեջ, պատահաբար չը  
ծագեց: Յես չեմ սիրել վոչ հրաշներ, վոչ պատահականու-  
թյուններ:



Մոնումենտի բիոգրաֆիան —դա Գեղրդի Յակովովի ստեղծագործության մոնոգրաֆիան է:

Վոճի գիծը կարելի յե նկատել իմ առաջին պատկերից, թատրոնական տասնյակ կառուցումներից մինչև մոնումենտը։ Վոչ թե «ծուռ» անվատահություն, այլ որգանական զարգացման ձգված լար։

«Զիարշավը» —կապույտ սպեկտոր եւ:

«Կոփվը» —կարմիր սպեկտոր եւ:

«Խիենցին» —թատրոնական կոմպոզիցիա:

«Ստադիոնը» —ճարտարապետական եսքիզ:

«26-ի մոնումենտը» —ետապ եւ:

Ժամանակակից վոճը —խտացած վոճն եւ, Նրա մեջ միացած են դարաշրջանային վոճերը, վորոնք թրծվել են հեղափոխության կրակում։ Այդպես ե յերկաթը դառնում պողպատ։

1917 թվին յես հանդես յեկա առաջին կոնստրուկտիվ (և վոչ կոնստրուկտիվատական) դեկորատիվ գործով։

Դա «Խարեյությունն» եր Մոսկվայի Կամերնի թատրոնում։ Կլողելի պիեսը արդիության լույսի տակ։

«Խարեյությունը» զարգացավ «Պրինցուհի Բրամբիլիայի» մեջ և դրանից ճավեց «Ռիենցին»։


Գրոտեսկից դեպի մոնումենտալություն։

«Կտավե թատրոնից» դեպի գրանիտյա թատրոն։

Դեղրդի Յակովով

## ՆԿԱՐՆԵՐ





Զիարշավ (1905 թ.)



Նախորդ միբն (1907 Բ.)

Բարեկարգ կապահան (Կոմիլսան 1912 թ.)






Մարտ (Ա. Պուշկինի «Ժիլ ու սպառքը բեդնի» լիգնդի  
առթիվ կոմպոզիցիա. 1912 թ.)




Պրինցունի Բրունիւն (Կարնավալ 1918-19 թ. թ.)



Կազմի և բարեւ Ծահմելի դիոսկուրական նախարարի տեսքը (1917-18 թ. թ.)




Աղջկա առքայի կուսացումն (1918)






Մելիլի գայթակղեւ (Կոմի կոստյով 1918 թ.)




Կարմիր Աքադ. կաֆեն (սահման Փիտորեսկ, սկսված և 1917 թ. վերջացված 1918 թ.)  
կոնսուլտուն և գործարքություն յնձ բանդակազործություն (Նեղը)






„Мера за меру“ Շերամիլ 18 թ.






Ապահով առևտնագիր եսքի.







Նորիւի դ եմբը (Վազների կուլա և Ռիյենցիի ուղեայից)






«Նորիւհի դեմքը» (Վազների Կոլա դ'Օլյենցի ուսկըսայից)




«Եղիսակ արքայի» բեմադրության նախա. (1920 թ.)



«Ժիլոֆլյա - ժիլոֆլյա» ովերնու. (Մուկվայի Կամերային թատրոն 1922 թ.)





Քսանվեցի մոնումենտը



2013

EE-2001



75.054(47.925) (092 Зицмлч

ЯКУЛОВ: Автобиография.

Издание Арменгиза, Москва.

1927